


դրոշմուած կը մնայ ամէն վերջալոյսի, եւ Մարդը զայն կը բնորոշէ իբր ՎԱՂՈՒՄՆ կամ ԳԱԼԻԲԻՆ ՅՈՅՍԸ, որուն կ'աղօթէ աղօթասացի մը նման, վերամբարձ բազուկներով, հաւատատուր կերպով, միամտօրէն եւ յամառաբար, իբրեւ իր ամենամօտ եւ ամենագօր աստուածը: Եւ դէպի անհունը արձակուած այդ ողորմելի աղաղակներուն, զալարող ցաւի մըմունջներուն արձագանգն է, որ կը բարձրանայ վեր, կը զարնուի երկնքի փակ դռներուն, միայն քիչ յետոյ ետ կաթելու վար՝ երկիր, տանջուած ու յուսախաբ մարդոց վրայ, նման անոնց՝ որոնք կ'ողբան պատերազմներէ եւ կամ երկրաշարժէ հիմնայատակ կործանած իրենց շէնքերու եւ քաղաքներու աւերակներուն վրայ, արցունքոտ աչքերով թախածագին խնդրելով եւ երբեմն նոր օրերու աստուծմէն բարձրաձայն պահանջելով՝ «Յոյս, Յոյս, Յոյս», իբր նոր օրուան եւ կամ ԱՄԱՆՈՐԻ նուէր՝ միշտ ՅՈՅՍ....:

Ն.Ա.Մ.



ՍԺԷ - 2017
ԵՆՈՐՀԱՌՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ Ս. ՄՆՈՒՆԻ

Ահաւասիկ ինչ կը գրէր
ԵՂԵՇԷ ՊԱՏՐԻԱՐԷ ՏԵՐՏԵՐԵԱՆ
1981 Թ. Ամանորի առթիւ (*)

Ա Մ Ա Ն Ո Ր

«Նոյնպէս եւ դուք յորժան առնիցէք
զամենայն համաձայնեալսն ձեզ
արասցիք, բէ ծառայք անպիտանը
նմբ, գոր ինչ պարտ էր ամենը: (ԴԿՍ.
ԺԷ. 10):

Յիսուս, Մուկասու Աւետարանէն առնելու վերոյիշեալ համարով, մեզի ցոյց կու տայ դերն ու կարեւորութիւնը պարտականութեան գիտակցութեան: Մեծ է դերը պարտականութեան գիտակցութեան՝ մարդկային գործունէութեանց բարոյր մատակարարման մէջ: 1981 տարուան սեմին կանգնած, չկայ աւելի պատշաճ յորդոր մարդ արարածին՝ քան հետամտումը իր պարտականութիւններուն անքերի կատարման: Մարդու արժանիքը կը կայանայ իր պարտականութեանց անձնուր իրագործման մէջ: Մեզմէ իւրաքանչիւրը պարտաւորութիւններ ունի իր անձին, անմիջական շրջապատին, համայնքին, ազգին եւ մարդկութեան հանդէպ: Միթէ անհատական եւ ընկերային կեանքի մշտական երեսփոխները արդիւնքը չեն մեզի վստահուած պարտականութեանց նկատմամբ մեր սնուցած անվտանգութեան, մեր ունեցած մակերեսային վերաբերմունքին, մեր փոքրիկ «ես»երուն մէջ մեր լծացումին: Պարտականութիւնը կ'ընդգրկէ ազնիւիւն եւ բարիքի իմացումը: Անհատէն սկսեալ մինչեւ պետութիւններ եթէ անձնւորաբար կատարէին իրենցմէ ակնկալուած պարտականութիւնները, աշխարհ պիտի չպարզէր այն տխուր տեսարանը՝ որուն ականատես կ'ըլլանք այսօր - պատերազմներ, ոճիրներ, շահագործումներ, անգրագիտութիւն, անօթութիւն, պատանդներ, առեւանգումներ, բռնութիւն, արդիւնք՝ եսակեղծում, շահամոլ ու անպարտաճանաչ մարդոց դասին:

«Միոն», 1981, Յուն.-Փետրուար

(*) Հատուած Բարդղէն խօսուած Ս. Յակոբեանց Մայր Տաճարի բնէն, Նոր Տարուան առաւօտուն:

